ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշտիի 1

№ 3431-Ա « 28 » օգոստոսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի Հ.2451-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի հ.2341-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 15.07.2024թ. հ.ՆՄ//22367-2024 և 03.04.2025թ. հ. ՆՄ//9265-2025 գրությունները և ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման /պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05.05.2023թ. հ.Կ-05052023-02-0049 որոշումը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտատրապետության և քաղաքաշինության վարչության 26.03.2025թ. հ.9679-25 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 17-ի «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կետրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված Զորավար Անդրանիկի փողոցի հ.74 հասցեում գտնվող շենքի և դրա պահպանման համար անհրաժեշտ 2112.0քմ մակերեսով հողամասի հողօգտագործման իրավունքի ձևակերպման մասին» հ.2451-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման մեջ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կետրոն« բառերը փոխարինել «Օթևան» բառերով, իսկ «2112.0» թիվը փոխարինել «482.76» թվով.

2. Զորավար Անդրանիկի փողոցի հ.74/2 /նախկինում՝ Զորավար Անդրանիկի փողոցի հ.74 հասցեում «Օթևան» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով

ամրացված շինությունների զբաղեցրած հողամասի մակերեսը կազմում է 482.76քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով, ուժը կորցրած ճանաչելով 06.12.2005թ. թողարկված հ. 19639-2005 գլխավոր հատակագիծը:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ